

Ս.Դ.Գ.Կ. - Տ.Ո.Ե.Ս. Երիտասարդական Դիան

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ԵՒ ՌԻՍԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Յարգելի ընկեր՝
Յառաջիկայ Յունուար 18, 2009-ին, կ'ամբողջանա ընկեր Սարգիս Տիրունիի նահատակության 80-րդ տարելիցը:
Այս առիթով, «Տըխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միությունը կիրակի, 18 Յունուար 2009-ի կ'էսորուան ժամը 12:00-ին կազմակերպած է ուխտագնացություն դեպի Սարգիս Տիրունիի դամբարանը, Ֆըրն էլ Շըպպեի Ազգային գերեզմանատուն:
Նոյն օրը առաւօտեան, Ռըմէյի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի հոգեհանգստեան պաշտօն, ողբացեալ ընկեր Սարգիս Տիրունիի եւ Յնչակեան բոլոր նահատակներուն յիշատակին:
Կը հրաւիրուի լիբանանահայ հասարակութիւնը:
Ծանօթ՝ Ֆըրն էլ Շըպպեի Ազգային գերեզմանատուն այցելել փափաքողներուն համար երթելը պահովուած է, «Տիրունի» ակումբին առջեւէն, առաւօտեան ժամը 11:30-ին:



ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ «ԶՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵԴՐՈՆ

Որքան անհրաժեշտ կը թուի ըլլալ աշակերտի մը հոգեմտաւոր դաստիարակութեան համար գէր տարին անգամ այցելել «Ջուարթնոց» կեդրոն, հաղորդակից ըլլալու իրենց տարիքը ունեցող հայ թերաճ պատանիներու հետ:



Թէև Մարտ 1-ը բնորոշուած է հայ թերաճներու օր, սակայն «Ջուարթնոց»-ի կողմէ կազմակերպուած ամանորեան ձեռնարկին աշխատանքներու ցուցահանդէսի հրաւերին ընդառաջեց Գ. Հարպոյեան վարժարանի տնօրէնութիւնը, որ ընդմիջտ քաջալերական ձեռնարկներու ցուցաբերած է արտադասարանային ձեռնարկներու հանդէպ: Հետեւաբար, 18 Դեկտեմբերին, 7-րդ դասարանի աշակերտներուն կողմէ, իրենց անգլերէնի ուսուցչուհի օրը, Մարթ Գրիգորեանի առաջնորդութեամբ կազմակերպուած էր գրօսանքի պահուն «սանտուիչի վաճառք» եւ գեղեցիկ գաղափարը յղացած էին տայն հասոյթը ամբողջութեամբ տրամադրելու հայ թերաճ մանուկներու ցուցահանդէսին:

«Ջուարթնոց» կեդրոն այցելելով, մեր աշակերտները առիթը ունեցան մարդկայնօրէն ընդլայնելու իրենց մտաւորիզմը, մի բանի ժամ թերաճներու հետ ժամանակ անցընելով: Անոնցմէ ոմանք մասի վերապահութեամբ ձեռնարկ իրենց տարիքը ունեցող հայ թերաճներուն, սակայն կարճ ժամանակ ետք, ընտելանալով մթնոլորտին անոնք իւրացուցած էին նաեւ «թերաճ» գաղափարի յղացքը:

Գ. Հարպոյեանի աշակերտները հարստացած երբ վերադարձան դպրոց, անոնք շատ բան ունեին պատմելիք իրենց միւս ընկերներուն: Յաջողակամօրէն, նոյնիսկ հայերէնի դասապահ մըն ալ տրամադրուեցաւ այս նիւթին հետ առնչուած, եւ աշակերտներ իրացուցին ոչ միայն գիտելիքներ թերաճներու մասին, այլեւ հարըստացուցին իրենց ընկերային եւ հոգեբանական տուեալները փառք տալով Ամենակալին իրենց ամբողջական ծնունդին:

ԵՐԵՒԱՆԻ ՄԵՋ ՆՇՈՒԵՑԱԻ ՓԱՐԱԶԱՆՈՎԻ 85-ԱՄԵԱԿԸ

Շարժանկարի հանրայնաւ բեմադրիչ, արուեստագէտ Սերէյ Փարաջանովի ծննդեան 85-ամեակին առիթով, Կոմիտասի անվան գրօսայթի պանթոնին մէջ, անոր շիրմաքարին մօտ հաւաքուած են մշակոյթի հայ եւ օտար գործիչներ՝ մշակոյթի նախարար Յասմիկ Պօղոսեան, Ուրբանիոյ դեսպան Ալեքսանտր Պոժօ եւ ուրիշներ: Յարգանքի տուրք մատուցելով անուանի բեմադրիչի յիշատակին՝ արուեստագէտներ գնահատանքի խօսքեր հնչեցուցանած են հայ եւ համաշխարհային մշակոյթին մէջ՝ անոր թերաճ վաստակին ու գործին մասին: Փարաջանովի 85-ամեակին առիթով, ձեռնարկներ կազմակերպուած են նաեւ Քիւիլի ու Մոսկուայի մէջ:

Հիբանանեան Ֆութպոլ

Հ.Ս.Ս. - ՆԱՐՏԱ 0-1

Հ.Ս.Ս.-«Պէլլոյթ» անգամ մը եւս ծախող արդիւնք արձանագրեց անցեալ Ուրբաթ օր, երբ, Հիբանանի ֆութպոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 11-րդ հանգրուանի մրցումներուն ծիրէն ներս, Պոլորճ Համուտի քաղաքապետարանի դաշտին վրայ 0-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Պար Իլիասի Նահտային առջեւ: Այս Հ.Ս.Ս.-ի ախոյեանական երրորդ պարտութիւնն է, 5 յաղթանակներու եւ 2 հաւասարութիւններու դիմաց: Հ.Ս.Ս.՝ 17 միաւորներով, տակաւին կը մնայ դասաւորման երկրորդ դիրքին վրայ: Բ. խմբակի մնացեալ մրցումներուն արդիւնքներն են՝ Մաուտատ-Իժթիմայի 1-1, Ռիատա Ատապ-Ահլի Սայտա 0-2:
Ա. խմբակին մէջ, Հ.Ս.Ս. պարտութեան մատնելով (1-0) իր հիւրը՝ Իրջատը, 16 կետերով ամրապնդեց իր դիրքը աղիւսակի երրորդ հորիզոնականին վրայ:

Երրօրեան Ֆութպոլ

ՀԵԼՍԻ ՄԵԾ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿՐԵՑ

Տօնական օրերու եւ ծմեռային արձակուրդներէն ետք, երրօրեան երկիրներու ֆութպոլի ախոյեանութիւնները աստիճանաբար կը վերաշարունակուին: Անցնող շաբաթավերջին վերսկսան Իտալիոյ եւ Ֆրանսայի մրցաշարերը, մինչ Գերմանիոյ մէջ, ախոյեանութեան գնացը վերստին պիտի շարժի 30 Յունուարին:



Իտալիոյ մէջ, ախոյեանութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն, վերջին երեք տարիներու ախոյեան Ինթեր Միլան, իր դաշտին վրայ խաղալով հանդերձ, պարտութեան հազիւ փրկուեցաւ իր հիւրին՝ Գալիարիի առջեւ, որուն դէմ հաւասարութիւն (1-1) մը արձանագրեց: Ասկէ անմիջապէս օգտուեցաւ Եուվեթուսը, որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց իր «տակար» հիւրը՝ Սիենան: Մինչ Ա. Ես. Ռոմայի եւ Ա. Սէ. Միլանի միջեւ «մեծ»-երու ճակատամարտը արտօնեցաւ 2-2 արդիւնքով:

Սպանիոյ մէջ, Պարչէլոնա (3-2) եւ Ռէալ Մատրիտ (3-0) արդիւնքներով յաղթանակներ արձանագրեցին իրենց դաշտերէն դուրս: Անգլիոյ մէջ, շաբթուան զագաթի հանդիպումը՝ Մանչեսթըր Եունայթըտի եւ Չելսիի միջեւ, արտօնեցաւ առաջինին մեծ (3-0) յաղթանակով, մինչ առաջատար Լիվըրպոլ հաւասարեցաւ (0-0) Սթըք Սիթիին: Ի վերջոյ, Ֆրանսայի մէջ, մինչ առաջատար Լիոն 2 կետեր կորսնցնելով (1-1), իր եւ փոխ առաջատար Պորտոյի միջեւ (4-0 արդիւնքով յաղթանակ)՝ Սէն Ժերմէնի դէմ կէտերու տարբերութիւնը նուազեցաւ մէկի: Ստորեւ կը ներկայացնենք Իտալիոյ, Սպանիոյ, Անգլիոյ եւ Ֆրանսայի մէջ առաջատար խումբերուն դասաւորումները:

ԻՏԱԼԻԱ (18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

	Մ.	ԿԵՏ	ԿՈՒՆԵՐ
1. Ինթեր Միլան	18	43	32-12
2. Եուվեթուս	18	39	31-13
3. Ա. Սէ. Միլան	18	34	30-20
4. Նափոլի	18	33	26-16
5. Ճենովա	18	32	27-17

ՍՊԱՆԻԱ (18-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

	Մ.	ԿԵՏ	ԿՈՒՆԵՐ
1. Պարչէլոնա	18	47	54-13
2. Ռէալ Մատրիտ	18	35	38-26
3. Սեւիլլա	18	35	27-16
4. Վալենսիա	18	34	36-24
5. Աթլետիքո Մատրիտ	18	30	41-29

ԱՆԳԼԻԱ (21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

	Մ.	ԿԵՏ	ԿՈՒՆԵՐ
1. Լիվըրպոլ	21	46	35-13
2. Չելսի	21	42	40-12
3. Մանչեսթըր Եունայթըտ	21	41	32-10
4. Ասթօն Վիլլա	21	41	35-23
5. Արսենալ	21	38	34-23

ՖՐԱՆՍԱ (20-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ)

	Մ.	ԿԵՏ	ԿՈՒՆԵՐ
1. Օլիմպիք Լիոն	20	39	34-24
2. Պորտո	20	38	35-19
3. Սթատ Ռեն	20	37	25-13
4. Օլիմպիք Մարսէյ	20	35	35-24
5. Թուլուզ	20	34	20-15

ԳՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՆՈՒԲԵՐ

Գնահատելով Ս.Դ.Գ.Կ. «Տիրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան աշխատանքը եւ յարատեւ յաջողութիւն մարդկայն, տեր եւ տիկ. ընկեր Մետրոպ Տատուրեան եւ զաւակուսը 100 հազար լիբանանեան ոսկի կը նուիրեն «Տըխրունի» Ուսանողական-Երիտասարդական Միութեան:

ԳՐԱԴՈՒԿԾ ՕՐ
21 Փետրուար 2009
Հ.Ս.Ս. «Մասիս»

BOGHOS OPTIC
Autoroute Jdeich, Tel.:01-870016

Ս.Դ.Գ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Ս.Դ.Գ.Կ. Ընտրական Կեդրոնական Մարմինը կու գայ ձեռք տեղեկացնելու, թէ յետայսու Նոր Հաճոյ իր գրասենեակը (ժամը 9:00-էն 8:00) եւ Անթիլիասի գրասենեակը (ժամը 11:00-էն 4:00) բաց են շաբթուան բոլոր օրերը, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն, ընդունելու ձեռք եւ ստուգելու ձեռք ընտրական կարգավիճակը:
Կը խնդրուի շարքայիններէն եւ համակիրներէն, ներկայանալ ստուգելու համար իրենց ընտրական կարգավիճակը: Յաւելեալ մանրամասնութեանց եւ կապ հաստատելու համար կրնաք հեռաձայնել՝ Նոր Հաճոյ գրասենեակ՝ 01-444738, Անթիլիասի գրասենեակ՝ 04-522345:
Ս.Դ.Գ.Կ. ԸՆՏՐԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Ս Ի Ն Ե Մ Ա Շ Ե Ա Ր Գ


«ՍԼԱՍՏՈԿ ՄԻԼԻՈՆԵՐ» ԱՐԺԱՆԱՅԱԲ ԶՈՐՍ ԿՈՆՏԸՆ ԿԼՈՊ ՄՐՑԱՆԱԿՆԵՐՈՒ

Կիրակի ուշ գիշերին, Լոս Անճելըսի մէջ կայացան ֆիլմարեւեստի Կոլտըն Կոյա մրցանքի 66-րդ մրցանակաբաշխութիւնները:



Բէյք Ուիլսոնը
Արդարեւ, բեմադրիչ Տեյնի Պոլլի «Սլամտոկ Միլիոներ» ժապաւէնը արժանացաւ լաւագոյն ժապաւէն, լաւագոյն բեմադրութիւն, լաւագոյն նիւթ եւ լաւագոյն երաժշտութիւն մրցանակներուն:

33-ամեայ բրիտանացի Բէյք Ուիլսոնը շահեցաւ լաւագոյն դերասանուհիի մրցանակը՝ «Ռիվոլուշըն Ռոտ» ժապաւէնին մէջ մարմնաւորած իր կերպարին համար: Ուիլսոնը նաեւ արժանացաւ լաւագոյն օգնական դերասանուհիի մրցանակին:
Միջի Ռուրը՝ «Տը Ռեսթլըր» շահեցաւ լաւագոյն դերասանի մրցանակը: Իսկ «Տը Տարք Նայթ» ժապաւէնին մէջ «Ճոքոր»-ի դերը մարմնաւորող, վաղամեռիկ Զիթ Լեճըրի յետ մահու շնորհուեցաւ լաւագոյն օգնական դերասանի մրցանակը:



Միջի Ռուրը եւ Պրուս Սփրինկլսթին
յետ մահու շնորհուեցաւ լաւագոյն օգնական դերասանի մրցանակը:

Մ Ա Հ Ա Զ Դ

Տեր եւ Տիկ. Տոքթ. Միսաք Ալեքսանեան եւ զաւակուսը
Տեր եւ Տիկ. Տոքթ. Վիգէն Ալեքսանեան եւ զաւակուսը
Տոքթ. Ռաֆֆի Ալեքսանեան
Օրդ. Վարդուհի Ալեքսանեան
Տեր եւ Տիկ. Վաչէ Ալեքսանեան եւ զաւակուսը
Տեր եւ Տիկ. Պերճ Սարգիսեան եւ զաւակուսը
Տեր եւ Տիկ. Բիւզանդ Հաճոյեան եւ զաւակուսը
Տիկ. Արմենուհի Թերաքեան եւ զաւակուսը
եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր, մեծ հօր եւ հարազատի՝

ՅԱԿՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆԻ (Շնեալ՝ Խարբերդ, 1915-ին)

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 11 Յունուար 2009-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, յետ կարճատեւ հիւանդութեան:
Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Երեքշաբթի, 13 Յունուարին, կէսօրէ ետք ժամը 2:00-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պոլորճ Համուտի Ազգային գերեզմանատուն:
Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
Յաւակցութիւնները կ'ընդունուին Երեքշաբթի՝ 13, Զորեքշաբթի՝ 14 եւ Գիւղշաբթի՝ 15 Յունուարին, հանգուցեալին բնակարանը, Անթիլիաս:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel. - Fax: 01-56 55 99
P.O.Box: 175275 MAR MIKHAEL, BEIRUT - LEBANON
Website: www.araraddaily.org e-mail: ararad@terra.net.lb
جريدة يومية سياسية أرمنية تصدر عن شركة ماسيس للطباعة والنشر (ش.م.ج.) المدير المسؤول: ابيسوغوم كريشكيان